ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ

թիվ ՍՑ-ԱՄ-2018/47

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.04.2018թ. թիվ 03/26-3/7233-18 գրությամբ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 12.04.2018թ. թիվ ԴՎԱ/1270 գրության հիման վրա, 18.04.2018թ. թիվ 03/26-3/7233-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը համաձայն չէ, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով գնման ընթացակարգով իր կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ:

Ընկերությունը հայտնել է, որ Պատվիրատուն նշել է, որ անվադողի վրա գրված չէ Nexen Tire, այլ միայն Nexen, սակայն Nexen ապրանքանիշի սերտիֆիկատում (կցվել է) հստակ նշված է Nexen Tire բառակապակցությունը և որևէ օրինական պահանջ, որ անվադողի վրա պետք է հստակ նշված լինի նաև Tire բառը չկա:

Պատվիրատուն առարկել է, որ տեխնիկական բնութագրի մեջ նշված չէ ապրանքի նշանը, օրինակ՝ տվյալ դեպքում RO-HP, որը նշված է անվադողի վրա:

RO-HP գրվածքը չի հանդիսանում ապրանքի նշան, այլ մոդելային շարքի անվանում է՝ RODIAN HP, այս շարքի մեջ են մտնում մոտ 32 տեսակի անվադողեր: Տվյալ պահանջը նույնպես չունի իրավական հիմք:

Ընկերությունը կից ներկայացել է նախադեպեր, որոնց դեպքում տեխնիկական բնութագրերում գրված է եղել Nexen Tire և նշված չի եղել մոդելի շարքը, օրինակ՝ RO-HP և ոչ մի դեպքում գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկելու մասին խոսք չի գնացել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/47 ընթացակարգի շրջանակներում 20.04.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.04.2018թ. թիվ ԴՎԱ/1270 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատման արդյունքում 24-րդ և 25-րդ չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն և վերջինս ծանուցվել է՝ ներկայացնել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

«Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով պահանջվող որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ներկայացված տեխնիկական բնութագրում նշված չէին հրավերում առկա պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված անվադողերի տեխնիկական ցուցանիշները և անվադողերի անվանումները:

Գնահատող հանձնաժողովը, 28.03.2018թ. հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը, մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հայտերի գնահատման նիստը՝ պահանջելով շտկել անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում վերջինիս կողմից ներկայացվել են որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակները, որոնցում կրկին նշված չի եղել ապրանքի անվանումը (մոդելը): Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ մասի պահանջները, որոշել է մերժել Ընկերության հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/47 ընթացակարգի շրջանակներում 20.04.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/47 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/47 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ -4/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 20.03.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 4-րդ կետի 4.1-րդ ենթակետով կայացված որոշմամբ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն Ընթացակարգի 24-րդ և 25-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ 1-ին ենթակետի «զ»

պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.03.2018թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես ներկայացված տեխնիկական բնութագրում նշված չեն հրավերում առկա պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված անվադողերի տեխնիկական ցուցանիշները և անվադողերի անվանումները:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 28.03.2018թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցել է «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ին՝ առաջարկելով սահմանված ժամկետում շտկել Ընկերության ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրված ծանուցման մեջ նշված անհամապատասխանությունները:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 05.04.2018թ. կայացրած որոշմամբ մերժել է «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի շտկված տարբերակում կրկին նշված չէ ապրանքի անվանումը (մոդելը):

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.04.2018թ. թիվ 03/26-3/7233-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 12.04.2018թ. թիվ ԴՎԱ/1270 գրությունը և կից փաստաթղթերը, «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի համապատասխան գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների

ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող

ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ ***առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):***

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերով 24-րդ և 25-րդ չափաբաժինների մասով նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Նշանակությունը, կառուցվածքը	Անվադողի մակնիշ/մոդելի/ծածկագիր	Անվադողի բեռնվածության ինդեքսի ոչ պակաս	Անվադողի բեռնվածության ինդեքսի ոչ ավելի
24	Անվադող 275/65R17	համասեզոն, նախատեսված ՋԻՊ, ԼԵՔՍԻՈՒՍ մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար	T(190)	115	1215
25	Անվադող 285/60R18	համասեզոն, նախատեսված ՋԻՊ ԼԱՆԴ ԿՌՈՒԶԵՌ ՊՐԱԴՈ, ՄԻՑՈՒԲԻՇԻ ՊԱՋԵՌՈ մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար	T(190)	116	1250

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով

առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ -4/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ***ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 20.03.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 4-րդ կետի 4.1-րդ ենթակետով կայացված որոշմամբ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն Ընթացակարգի 24-րդ և 25-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են համապատասխան փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.03.2018թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես ներկայացված տեխնիկական բնութագրում նշված չեն հրավերում առկա պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված անվադողերի տեխնիկական ցուցանիշները և անվադողերի անվանումները: Ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 28.03.2018թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցել է «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ին՝ առաջարկելով սահմանված ժամկետում

շտկել Ընկերության ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրված ծանուցման մեջ նշված անհամապատասխանությունները:

Ընկերությունը սահմանված ժամկետում ներկայացրել է տեխնիկական բնութագրի հետևյալ շտկված տարբերակը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	ծագման երկիրը	տեխնիկական բնութագրերը
24	Անվադող 275/65R17 համասեզոն	Անվադող 275/65R17 համասեզոն Nexen	Nexen Tire	Կորեա	Համասեզոն, նախատեսված ՋԻՊ, ԼԵՔՍԻՈՒՍ մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար: Անվադողի սահմանելի արագության ինդեքսը/կմ/ժ T(190), անվադողի բեռնվածության ինդեքսը 115, անվադողի բեռնվածությունը /կգ/ 1215
25	Անվադող 285/60R18 համասեզոն	Անվադող 285/60R18 համասեզոն Nexen	Nexen Tire	Կորեա	Համասեզոն, նախատեսված ՋԻՊ ԼԱՆԴ ԿՌՈՒԶԵՌ ՊՐԱԴՈ, ՄԻՑՈՒԲԻՇԻ ՊԱՋԵՌՈ մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար: Անվադողի բեռնվածության ինդեքսը 116, անվադողի բեռնվածությունը /կգ 1250

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 05.04.2018թ. կայացրած որոշմամբ մերժել է «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմաբ, որ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի շտկված տարբերակում կրկին նշված չէ ապրանքի անվանումը (մոդելը):

Այսպես, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությունը սահմանում է, որ ***մասնակիցը առաջին տեղն զբաղեցրած ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի 3.1-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանվել է, որ 1-ից մինչև 56-րդ չափաբաժինների մասով որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ Հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են 1-ից մինչև 56-րդ չափաբաժինների մասով իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն Հավելված N 6.1-ի:

Հավելված 6.1-ի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ -4/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ***ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):***

Ուսումնասիրելով «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի շտկված տարբերակը (Հավելված 6.1), արձանագրում եմ, որ Ընկերության կողմից ներկայացվել են Ընթացակարգի հրավերով նախատեսված՝ մասնակցի կողմից ներկայացման ենթակա առաջարկվող ապրանքների

անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր), որը համապատասխանում է հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որպես անհամապատասխանություն նշված ապրանքի անվանման (մոդել) բացակայությունը, ապա հայտնում եմ, որ Ընկերությունը պարտավոր էր ներկայացնել առաջարկվող ապրանքի անվանումը, որը տվյալ դեպքում ներկայացվել է և նշվել է Ընթացակարգի հրավերում նշված ապրանքի անվանմանը համապատասխան (Անվադող 275/65R17 համասեզոն, Անվադող 285/60R18 համասեզոն): Տվյալ դեպքում մոդելի մատնանշված չլինելը չի կարող դիտարկվել որպես Ընկերության կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, քանի որ Ընկերությունը պարտավորվել է ներկայացնել ապրանքի անվանումը և Ընկերության կողմից հայտի 6.1 հավելվածով ներկայացվել են բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, որոնք պահանջվել են հրավերով և նախատեսված են ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ և հնարավորություն են ընձեռնում գնահատող հանձնաժողովին գնահատելու առաջարկվող ապրանքի՝ հրավերով պահանջվող ապրանքին համապատասխանությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսիսով, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում թույլ չի տվել ստանձնած պարտավորության խախտում, ուստի առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.04.2018թ. թիվ 03/26-3/7233-18 գրությամբ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00430814) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**